ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 16 » հոկտեմբերի 2019 թվականի N: 510-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-Ի N88-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ ենթակետերի, 7-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի հուլիսի 19-ի N01/07.1/13986 գրությունը,

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանք համայնքի ղեկավարի 2019 թվականի հուլիսի 22-ի թիվ 25-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Նոր Կյանքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2019 թվականի հուլիսի 12-ի նիստի N 11 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ժամկետը լրանալու կապակցությամբ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Նոր Կյանքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամներ՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված Վարդան Բաղդասարյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Խաչատուր Խնձրցյանի, Զորիկ Խաչատրյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանք համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Ոսկեհատ Ադամյանի, Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Արա Սուքիասյանի լիազորությունները:

2. Խորհրդի անվանական կազմում երեք տարի ժամկետով հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից առաջադրված Կարեն Խաչատրյանին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Ռուբեն Հարությունյանին, Էմիլյա Ոսկանյանին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանք համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Արա Սուքիասյանին, Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Գևորգ Պետրոսյանին:

3. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի ապրիլի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Նոր Կյանքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N51-Ա որոշման մեջ փոփոխություն

կատարելու մասին» N88-Ա որոշման հավելվածում «Բաղդասարյան Վարդան – Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված», «Խնձրցյան Խաչատուր», «Խաչատրյան Զորիկ», «Ադամյան Ոսկեհատ», «Սուքիասյան Արա» բառերը համապատասխանաբար փոխարինել «Խաչատրյան Կարեն – Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից առաջադրված», «Հարությունյան Ռուբեն», «Ոսկանյան Էմիլյա», «Սուքիասյան Արա», «Պետրոսյան Գևորգ» բառերով:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝